ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«12» «դեկտեմբեր» 2020թ. № 273-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշման հավելվածի 7-րդ կետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողով»:

2. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողովի անհատական կազմ»-ը համաձայն հավելված N1-ի,

2) «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողովի աշխատակարգ»-ը համաձայն հավելված N2-ի:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

8/12/2020

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«12» դեկտեմբեր 2020թ.
ք. Երևան

[Type here]

Հավելված N1
Շրջակա միջավայրի նախարարի
2020թ. դեկտեմբերի « 12 »- N 273-Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ռ. Պետրոսյան	շրջակա միջավայրի նախարար (հանձնաժողովի նախագահ),
Է. Փիրումյան	շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
Ա. Ալեքսանդրյան	շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետ
Մ. Ղազարյան	շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության մթնոլորտ արտանետումների և թափոնների կառավարման բաժնի պետ,
Մ. Դավթյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ),
Ա. Առուստամյան	առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչության գլխավոր տեսուչ (համաձայնությամբ),
Ռ. Գրիգորյան	առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ (համաձայնությամբ),
Կ. Կարապետյան	արտակարգ իրավիճակների նախարչարության ծառայության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փրկարար ծառայության գնդապետ (համաձայնությամբ),
Ա. Միրզոյան	բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության բաժնի պետ (համաձայնությամբ),
Ս. Պարանյան	էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ),
Գ. Նավասարդյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ),

[Type here]

Տ. Գասպարյան	ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ (համաձայնությամբ),
Վ. Խաչատրյան	ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի աշխատակից (համաձայնությամբ),
Ն. Կնյազյան	գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ),
Շ.Մադոյան	շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության մթնոլորտ արտանետումների և թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար):

[Type here]

Հավելված N2
Շրջակա միջավայրի նախարարի
2020թ. «13» - N 273Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշմամբ հաստատված կարգով (այսուհետ՝ կարգ) շրջակա միջավայրի պետական կառավարման լիազորված մարմին (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) տվյալ հայտատուի՝ վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացություններ կայացնելու հետ կապված գործառույթներն ու գործունեության կազմակերպման ընթացակարգը:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Լիցենզավորման մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշմամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակը լիցենզավորող մարմնին տվյալ հայտատուի՝ վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ գրաղվելու վերաբերյալ եզրակացության տալն է:

4. Հանձնաժողովի խնդիրներն են.
1) Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման համար մասնագիտորեն հիմնավորված եզրակացության ապահովումը,
2) տվյալ հայտատուի վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ լիցենզավորող մարմնին եզրակացության, հայտին կից փաստաթղթերի ընդունման և դրանց քննարկման գործընթացի ապահովումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) վտանգավոր թափոնների գործածության համար լիցենցավորվող գործունեության իրականացմանն անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության փորձարարտադրական տեղակայանքների, սարքավորումների ու անալիտիկ գործիքների, գործունեության իրականացման վայրի, վտանգավոր թափոնների տեղադրման վայրի ընտրության և անհրաժեշտ պայմաններով ապահովվածությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը,

2) վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ զբաղվելու նպատակով տվյալ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և գնահատման արդյունքում լիցենզավորվող գործունեության վերաբերյալ եզրակացության կազմումն ու այն լիցենզավորող մարմին ներկայացնելը,

3) լիցենզավորվող գործունեության՝ էկոլոգիապես անվտանգ եղանակների ու պայմանների վերաբերյալ առաջարկություններ տալը,

4) «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված այլ գործառույթներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով:

7. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են լիցենզավորող մարմնից հայտն ու փաստաթղթերն ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9. Հանձնաժողովը նիստի արդյունքում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հայտատուի՝ լիցենզիա կամ լիցենզիային կից ներդիր ստանալու հայտը բավարարելու և վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ կամ գործունեության համապատասխան տեսակով զբաղվելու վերաբերյալ դրական եզրակացություն տալու մասին,

2) հայտատուի՝ լիցենզիա կամ լիցենզիային կից ներդիր ստանալու հայտը մերժելու և վտանգավոր թափոնների գործածության գործունեությամբ կամ գործունեության համապատասխան տեսակով զբաղվելու վերաբերյալ բացասական եզրակացություն տալու մասին,

3) հայտատուին լիցենզիա կամ լիցենզիային կից ներդիր ստանալու հայտի կամ հայտին կից ներկայացված փաստաթղթերի թերությունները վերացնելու և դրանք կրկին ներկայացնելու առաջարկություն ներկայացնելու մասին,

4) հայտատուի՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություններ տալու մասին:

10.Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահն, իսկ նրա

բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

11. **Հանձնաժողովի նախագահը.**

1) լիցենզավորվող գործունեության վերաբերյալ եզրակացություն կազմելու նպատակով, տվյալ գործունեության շրջանակներում, հանձնաժողովի աշխատանքներում կարող է ներգրավել համապատասխան մասնագետների:

12. **Հանձնաժողովի նախագահի տեղակալը.**

1) հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում փոխարինում է նրան,

2) ուսումնասիրում է լիցենզավորող մարմնից ստացված հայտն ու դրան կից փաստաթղթերի լիակազմությունը,

3) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի հրավիրման աշխատանքները:

13. **Հանձնաժողովի քարտուղարը.**

1) հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստի անցկացման օրվա, ժամի և տեղի մասին,

2) նախապատրաստում է հանձնաժողովի նիստում քննարկվելիք նյութերը և դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին,

3) կազմում է հանձնաժողովի նիստի արձանագրությունները և ապահովում հանձնաժողովի անդամների ստորագրությունները,

4) քննարկման արդյունքների հիման վրա կազմում է վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման վերաբերյալ եզրակացությունը և հանձնաժողովի նիստում քվեարկությանը մասնակցած անդամների ստորագրություններով այն ներկայացնում հանձնաժողովի նախագահին՝ ստորագրության,

5) գրանցում է լիցենզավորող մարմնից ստացված հայտն ու դրան կից փաստաթղթերը, հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և եզրակացությունները:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: